# ՆԵԵՄԱՆԻ ԳԱՂՏՆԻՔԸ
# NAAMAN'S SECRET

**ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.**

- *ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՆՐԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՆ*

  *ՔԱՂԱՔԻ ՄԱՐԴԿ, ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ, ՈՐԲԵՎԱՅՐԻ ԿԻՆԸ, ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԸ*

- *ՆԵՄԱՆԸ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ*

- *21 ՕՐՅԱ ԾՈՄ 2 ԿԵՏԵՐԻ ՇՈՒՐՋ.*

  *ՄԵՐ ՄԱՐՄՆԻ, ԱՆՁԻ, ՀՈՒԳՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*
  *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ*

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 5.1-15

*1 Ասորիների թագավորի զորապետ Նեեմանը մեծ ու հարգելի մարդ էր իր տիրոջ առաջ, որովհետև Տերը նրա միջոցով փրկություն էր տվել ասորիներին: Այդ մարդը քաջ էր ու զորավոր, <u>բայց բորոտ էր</u>:*

- *Ի՞նչ է բորոտությունը*

## I. ԱՅԴ ՄԱՐԴԸ ՔԱՋ ԷՐ ՈՒ ԶՈՐԱՎՈՐ, ԲԱՅՑ <u>ԲՈՐՈՏ ԷՐ</u>:

- *Նա դրսեվանց զորեղ, հզոր և ամբողջությամբ լավ էր երեվում բայց ուներ մի գաղտնիք որը թագցրել էր իր գեղեցիկ հանդերձների տակ...*

  *Շատ դեպքերում ուժեղ և թույլ կողմերը նույն մետաղադրամի երկու կողմն են. Ուժեղ և թույլ կողմերի մասին խոսելը շատ կարեվոր թեմա է, քանի որ գրեթե միշտ դրանք նույն բանն են: Steve Jobs*

  *2 Կորնթացիս 12:10 — Ուստի հանուն Քրիստոսի հաճույքով համբերում եմ տկարությունների, նախատինքների, վշտերի, հալածանքների և նեղությունների, որովհետև <u>երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ</u>:*

*2 Մի անգամ ասորիների գնդերը եկել և Իսրայելի երկրից գերի էին տարել մի փոքրիկ աղջկա, որը ծառայում էր Նեեմանի կնոջը: Սա ասաց իր տիկնոջը. «Երանի թե իմ տերը լիներ Սամարիայում գտնվող մարգարեի առաջ, և նա նրան կբժշկեր իր բորոտությունից»: Նեեմանը գնաց ու պատմեց իր տիրոջը՝ ասելով. «Այսպես ու այսպես է խոսել Իսրայելի երկրից եկած աղջիկը»:*

*1 Կորնթացիս 1:27 — իսկ աշխարհի տկարներին Աստված ընտրեց, որպեսզի հզորներին ամաչեցնի:*

## II. Ո՞ՒՄ ԵՔ ԹՈՒՅԼ ՏԱԼԻՍ ԽՈՍԵԼ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ:

*8 Եվ երբ Աստծու մարդը՝ Եղիսեն, լսեց ...թող նա գա ինձ մոտ և իմանա, որ մարգարե կա Իսրայելում»: 9 Նեեմանն իր ձիերով ու կառքով գնաց կանգնեց Եղիսեի տան դռան մոտ: 10 Եղիսեն պատգամավոր ուղարկեց նրա մոտ՝ ասելով. «Գնա՛ և յոթ անգամ լվացվի՛ր Հորդանանում, և քո մարմինը կվերադառնա քեզ մոտ, ու կմաքրվես»:*

- *Փաստորեն Մարգարեն ասում է, քո փառքը և քո ամբողջ ամբիցիաները պետք է թաղես Հորդանանում:*

## III. ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ ՊԱՐԶ Է, ԲԱՅՑ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԳՆԱԾ Է ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

*11 Բայց Նեեմանը բարկացավ ու գնաց՝ ասելով. «Ես կարծում էի, թե անպատճառ պիտի դուրս գա, կանգնի ինձ մոտ, կանչի իր Տեր Աստծու անունը և ձեռքը շարժի այն տեղի վրա և այդ ժամանակ կբժշկի բորոտությունը: 12 Մի՞թե Դամասկոսի Աբանա և Փարփար գետերը Իսրայելի բոլոր ջրերից լավ չեն. մի՞թե չեմ կարող նրանց մեջ լվացվել ու մաքրվել»: Եվ նա ետ դարձավ ու գնաց բարկությամբ:*

## IV. ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ՈՐ ԱՍՏՎԱԾ ԽՈՆԱՐՀԵՑՆԻ ՁԵԶ:

*13 Բայց նրա ծառաները մոտեցան, խոսեցին նրա հետ և ասացին. «Ո՛վ հայր, եթե մարգարեն քեզ մի մեծ բան ասած լիներ, չէի՞ր անելու. էլ ո՞ւր մնաց, որ քեզ ասաց. "Լվացվի՛ր և կմաքրվես"»: 14 Նա իջավ գած և Աստծու մարդու խոսքի համաձայն յոթ անգամ սուզվեց Հորդանանի մեջ. նրա մարմինը փոքր տղայի մարմնի նման դարձավ, և նա մաքրվեց:*

> Հակոբոս 4:6 – Բայց ավելի մեծ շնորհ է տալիս. դրա համար ասում է. «Աստված ամբարտավաններին հակառակ է, բայց խոնարհներին շնորհ է տալիս» (Առկ. 3.34):

*15 Նա իր ամբողջ բանակով ետ դարձավ, եկավ Աստծու մարդու մոտ, կանգնեց նրա առաջ և ասաց. «Իմացա, որ այս ամբողջ երկրի վրա Աստված չկա, այլ կա միայն Իսրայելում. և հիմա խնդրում եմ, մի ընծա՛ ընդունիր քո ծառայից»:*

*Ղուկաս 17:15-17, 19 — Նրանցից մեկը, երբ տեսավ, որ բժշկվեց, վերադարձավ՝ բարձրաձայն փառաբանելով Աստծուն: Նա երեսնիվայր ընկավ Հիսուսի ոտքերի առաջ և գոհություն էր հայտնում, և ինքը սամարացի էր: Հիսուսը պատասխանեց և ասաց. «Չէ՞ որ տասն էլ մաքրվեցին, արդ այն ինը որտե՞ղ են: Եվ նրան ասաց. «Վեր կաց գնա՛, քո հավատը փրկեց քեզ»:*

## Հաջորդ Քայլը:

*Ղուկաս 4:24, 27 — Եվ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. ոչ մի մարգարե ընդունելի չէ իր հայրենիքում: Եղիսե մարգարեի ժամանակ Իսրայելում շատ բորոտներ կային, ու նրանցից ոչ ոք չմաքրվեց, բացի Նեեման Ասորուց»:*